Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2020 թվականի
հոկտեմբեր 09-ի N 170-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՔՈՒՅՐ-ՔԱՂԱՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

_____ ՔԱՂԱՔԻ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

_____

_____ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հարգելի գործընկերներ

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական զինված ուժերը, իրականացնելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի տասնամյակից ավելի հնչեցրած սպառնալիքները, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը լուծելու է բռնի ուժով եւ պատերազմի միջոցով, անտեսելով միջազգային առաջադեմ հանրության, Արցախի/Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ դրա համանախագահների վճռական պնդումները, թե այս կոնֆլիկտը ռազմական լուծում չունի, եւ հորդորները, որ խնդիրը հարկավոր է կարգավորել բանակցությունների միջոցով, կիրառելով ահռելի, աննախադեպ եւ բազմազան զինուժ, ռազմական տեխնիկա, հրետանի, օդուժ, հրթիռային կայանքներ, հարձակվել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության վրա, սկսելով տարածաշրջանում 21-րդ դարի ամենածանր պատերազմը:

Արդեն գրեթե 2 շաբաթ ձգվող այս ծանր պատերազմի ընթացքում Ադրբեջանի իշխանությունները Արցախի խաղաղ բնակչության, բնակավայրերի եւ հատկապես մայրաքաղաքի դեմ կիրառել են ծանր ռմբակոծություններ, հրթիռակոծություններ, օդային հարվածներ ինչպես ռազմական օդանավերից, այնպես էլ թռչող, ռմբահարող եւ ինքնասպան անօդաչու սարքերից: Ադրբեջանը թիրախավորել է այնպիսի քաղաքացիական ենթակառուցվածքներ, ինչպիսք են մշակույթի տները, համայնքապետարանները, մանկապարտեզները, դպրոցները, հիվանդանոցները, եկեղեցիները եւ այլն: Արդյունքում Արցախում այդ ռմբահարումների հետեւանքով զոհվել է 20 եւ վիրավորվել է 93քաղաքացիական անձ, այդ թվում մի քանի տեղացի եւ օտարերկրացի լրագրող,մասնակի կամ ամբողջությամբ ավերվել է ոչ ռազմական նշանակության ավելի քան 4800 շենք եւ շինություն: Խաղաղ բնակչության դեմ հարվածները զուգորդվել են 100-ից ավելի երկրներում արգելված կասետային ռումբերի եւ հրթիռների կիրառմամբ: Արցախի Հանրապետությունը հայտնվել է մարդասիրական աղետի մեջ:

Ադրբեջանը այս պատերազմում ռմբահարել եւ հրթիռահարել է նաեւ Արցախի Հանրապետությանը սահմանակից Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանների գյուղերն ու բնակավայրերը, որոնց արդյունքում նույնպես կա մեկ զոհ, վիրավորներ եւ ավերածություններ:

Բավարար ապացույցներ կան այն բանի, որ Ադրբեջանի այս հարձակումը կազմակերպվել է Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության հետ եւ պատերազմը մղվում է թուրքական ռազմական մասնագետների, դիվանագիտական կորպուսի եւ օդուժի խիստ ակտիվ մասնակցությամբ: Ֆրանսիայի, Ռուսաստանի, ԱՄՆ, Սիրիայի իշխանությունները հաստատել են, որ Թուրքիան Սիրիայի հյուսիսից հարյուրավոր ահաբեկիչ գրոհային վարձկաններ է հավաքագրել եւ ուղարկել Ադրբեջան՝ ի լրումն Ադրբեջանի զինուժի: Այդպիսով մի շարք երկրներում ռազմական եւ այլ ագրեսիվ միջամտություններով չբավարարված, անցած դարասկզբին Հայոց Ցեղասպանություն իրականացրած

Թուրքիան այժմ էլ մեր տարածաշրջան է ներմուծել միջազգային ահաբեկչություն, ինչը սպառնում է ոչ միայն Հայաստանին եւ Արցախին, այլեւ հարեւան մյուս երկրներին՝ Վրաստանին, Ռուսաստանին, Իրանին, ինչպես նաեւ Ադրբեջանում ապրող բազմազգ ժողովրդուրներին երկարաժամկետ եւ ծանր ռիսկերով:

Հարգելի գործընկերներ, դիմում ենք ձեզ, խնդրանքով՝ ի գիտություն ընդունել այս հաղորդումը, դատապարտել Արցախի հանրապետության նկատմամբ ադրբեջանաթուրքական ագրեսիան եւ էթնիկ զտման քաղաքականությունը, հանուն մեր գործընկերային հարաբերությունների եւ տեւական խաղաղության հաստատման խնդրում ենք՝ դիմել ձեր պետական իշխանություններին, փոխանցելով մեր մտահոգությունները, կոչ անելով՝ ներդնել բոլոր հնարավոր դիվանագիտական եւ մարդասիրական ջանքերը՝ զսպելու Ադրբեջանի սանձազերծած այս պատերազմը եւ այդպիսով օգնել հնարավորինս արագ վերականգնել խաղաղությունը տարածաշրջանում:

09 հոկտեմբերի, 2020 թ.

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ